




„ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ“*)



1945 թվի հունիս ամսին կարևոր իրադարձություն տեղի ունեցավ Հայ Եկեղեցու կյանքում:

Հնավուրց էջմիածին էին հավաքվել կաթողիկոսական ընտրության համար սփյուռքի բոլոր ծայրերից ժամանած պատգամավորները: Դա Հայ Եկեղեցու պատմության մեջ առաջին լրիվ և բազմամարդ ներկայացուցական կազմ ունեցող կաթողիկոսական ընտրությունն էր, որին մասնակցում էին նաև Կիլիկիո կաթողիկոսը և երոսազնեմի ու Կ. Պոլսի պատրիարքները:

Ծնորհիվ Սովետական Կառուվարության ընձեռած դյուրությունների աշխարհի բոլոր կողմերում ընտրված պատգամավորները Հնարավորություն էին ստացել մենակլու ավետարաց երկիր՝ Հայրազատ Սովետական Հայաստանը:

Այսպիսի մի իրադարձություն էր կարող անոշադիր թողնել Սովետական Հայաստանի կինո-արվեստի ընագավառում աշխատողների կողմից: Երևանի կինո-ստուդիան՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգային Տեղակալ Գելոցը արթավիսկոպոս Զերեքյանի բարեհաճանանկությամբ ձեռնամուխ եղավ. Առաջին-Եկեղեցական ժողովին նվիրված մի կինոֆիլմի արտադրության, որը մեծ հաջողություն ունեցավ կինո-հանդիսա-

*) Կինոֆիլմ՝ 7 մասից, արտադրությամբ երևանի Կինոստուդիայի, 1945 թ. Ռեժիսոր՝ Ա. Հայ-Արտյան, ծագրատորներ՝ Ա. Արամյան, Ս. Գելվորյան, Ի. Դիլդարյան, Հնայլանային օպերատոր՝ Ի. Դրիգուրյան, Երաժշտական ձևավորում՝ Ա. Սաթոնցի:

տեսների շրջանում: Այդ հաջողության գաղտնիքն նրանումն է, որ երևանի կիոնության վրա խորը հուզական մի նկար: Նկարը մկխով է Արարատյան դաշտի շրմազ պելաժով. էկունից հնչում է դիկտորի ժողովութական արտիստ Դ. Մալյանի թավ ձախը. Արարատյան դաշտ, Հայաստանի սիրաց: Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդը այստեղ էր հիմք դրբել իր բազմադրյան պատմական կյանքին ու կուլտուրային: Իր ժրաշան աշխատանքով, ստեղծագործական ավլունով հայ մարդը շենացրել ու ծաղկեցրել է իր հայելնիքը:

Արարատյան դաշտին փոխարինում է ալհեր Արարատը. էկրանով մեկ երկում է վեհանիստ, խորհրդավոր լեռը, հայ ժողովով պատմության անխոս վկան. նորից հնչում է դիկտորի ձախը...

Անա նա, առասպելներով՝ պարուրված, վիթխարի, փորհըրդավոր ու սպիտակափառ այդ ինո՞ր՝ Արարատը, հայ մարդու համար նվիրական ու հարազատ բարձրագահ Մասկիլը:

Արարատյան դաշտի հանդիպակաց ծայրին երկում են շրույ ալհեր գագաթներ. դա Արաբան է, Հայաստանի երկրորդ բարձրաբերձը, որի ստորոտին, Օշական գլուզում թաղված է հայ գրերը հորինող Մեսրոպ Մաշտոցը:

15 դար հանդում է այստեղ ալհեր մեծ հանճարի աճյունը և 15 դար հայ ժողովուրդը նրա հորինած այբուբենով է պարզացրել ու աճեցրել իր հոգուր գանձերը: Եկրանի վրա երկում է Մեսրոպ Մաշտոցի տապանագարը ու եկեղեցին, որտեղ թաղված է նա:

Օշականին հաջորդում է նորից Արարատյան դաշտի պելաժով. այս դաշտում են գտնվել դարերի ընթացքում իրար հաջորդող Հայաստանի բոլոր մայրաքաղաքները, այստեղ է նաև հայ ժողովորի այժմյան պետականության կենարոնը, Սովետական Հայաստանի և այլաքաղաքների երանը:

Երևանի փոնի վրա երկուով սլանում է խորոյ մարդատար ինքնամիքը, որը վայրէջք է կատարում օրանավականական է կցմիածնին ներկայացրության վրա կամաց անդամանությունները, ինու այլ բարտորները վայրուց սպասում են օդանավակայանում: Խնդնաթիւի իշնում են

Աղքալին— եկեղեցական ժողովի հւգևոր և աշխարհիկ պատգամավորները: Նրանցից շատերը առաջնի անզաման են կարուսակեղ սրբուով ոտք զնում իրենց սիրելի հայրենի հոգի վրա: Նրանք հուզված են և անհուն երանկությունից խոսք չեն գտնում իրենց քրեկանիքն արտահայտելու: Համար:

Երևան՝ երկաթուղային կայարանում արտաշարք կու ու զեռ է տիրում: Խամանում է ձեպսնթացը. գնացքից իշնում են նիկիկն կաթողիկոս Գարեգին Ա, Երուաղիմի պատրիարք Կյուրիկ Բ և մյուս պատգամավորները: Ժամանած պատգամավորները ափում եքենաներով անցնում են ներանին պղոտաներով, փողոցներով, ծառուման հրապարակով, կառավարակով, պատավարական առան կողքից և կանգ են առնում Արքովյան հրապարակում:



Սովետական Միության և արտասահմանի այլ և այլ վարպերից՝ Աներիկայից, Անդինից, Ֆրանսիայից, Բալկանյան երկրներից, Եգիպտոսից, Իրանից, Սիրիայից ինքնամիքով, գնացքով ժամանում են հայ ժողովորի բազմաթիվ հատվածներից, ընտրված պատգամավորները՝ Հայ Եկեղեցական ժողովին մասնակցելու համար:

Երևանից պատգամավորները մեկնում են էջմիածնին: Էկրանի վրա է էջմիածնի վանը— Հայ Եկեղեցու Գենտրոնը, Հնագույն դարերից այստեղ հաստատված Հայ Եկեղեցու Գերագույն Պետի՝ Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռանիստը: Պատգամավորները դիտում են Մայր տաճարը, մշշաման սեղանը, կաթողիկոսի գահը, մեռնի կաթոսան, Տըրդատ թագավորի թագը և վանքի գավթի գերեզմանաքարերը, որոնց տակ ամփոփված են կաթողիկոսների աճյունները. Վեհարանում դիտում են կաթողիկոսական

ընդունարանը, ծաղկյա դահլիճի սրմանակաները; որոնք 16-րդ դարի նշանավոր նկարիչ Հովհաննի ձեռքի դործն է ու կաթողիկոսական թափուր դահը, որը սպասառում է Նորմատիր կաթողիկոսին:

Ցուցադրվում է մինչև եկեղեցական ժողովին անցնելը՝ Հունիսի 12-ին, կայացած եպիսկոպոսական նախապատրաստական խորհրդակցությունը. սեղանի շուրջը նստած են Կիրիկիոս կաթողիկոս Գարեգին Ա, Աղքանափառ Տեղակար Գևորգ արքեպիսկոպոս Չեռոբյանը և մյուս ներք:

Այսուհետեւ կինոն ձեզ փոխադրում է Հայաստանի մի շարք տաճարան վայրերը, որոնցից մի քանիսը այցելեցին պատգամավորները և ծանօթացան Հույակապ հույարձանների հետ. Ահա նրանք այցելում են Հոչակավոր Քարթիստը, որը վկայում է, որ հայ ճարտարապետաթիւնը հին ժամանակներում հասած է եղել զասական կատարելության: Այսուհետեւ ցուցադրվում է հայ ճարտարապետության գույն գործոցներից մեկը՝ 618 թվին կառուցված Հոփիսիմի տաճարը, ապա Գայանեի վանքը, 10-րդ դարում Խոսրովանուուշ թագուհու պատճեռով կառուցված Սանահինի և Ամենափառիշխանը, Հաղպատի վանքը, Տաթեւի հոչակավոր վանքի մնացորդները, Գեղարդի Այրիվանքը, նրա հոչակալած քարափառը հույարձանները և ժայռի մեջ փորված Լեկեղեցին, որը շինարկեստի աշխարհաշուշակ կոթողներից մեկն է: Պատգամավորներն այցելեցին նաև Գայնին, որը նշանավոր է իր հնադարյան բերդի և առաջին դարում շինված հեթանոսական տաճարի մնացորդներով:

Էկրանից լսվում է մեղմ «Զայն տուր, ով ծովակա երգը. Հորիզոնը ծածկված է ամպերով. երեսում է Հայաստանի պարծանք Սևանա լիճը և Կոդին. ամպերի միջից արեկա ճառագայթներն ընկել են լճի մրա. լիճը շոշացուած է աղամաննի պես. պատղամավորները նավով մեկնում են կոզին. դիտում են Սևանա վանքը, ձկան որսը. հանրահոչակ Սևանի իշխան ձկները խլվում են ուղևանում: Պատգամավորների մեջ է նաև Քենտրոնի Մայր տաճարի



ավագ երեց Հովհետ Ջոնանը, որը նույնություն մասնակցում է Հայ եկեղեցական ժողովին:

Հունիսի 16-ն է:

Եկրանից լսվում է զանգերի ղողանչ: Տեղակալ Կիրիկոս արքեպիսկոպոս Զորեքանը և Կիրիկիոս կաթողիկոս Գարեգին Ա, պատգամավորների ուղեկցությամբ գնում են ժողովը. լիազորագրերը ստուգեալուց հետո պատգամավորներն անցնում են ժողովասրահը. Նիստը բացվում է Գարեգին կաթողիկոս ազգություն. այսուհետև Տ. Տեղակալ Կիրիկոս արքեպիսկոպոսը դիմում է ժողովին ողջունի խոսքով.

Ալգային-Եկեղեցական ժողովը գումարվում է հայ ժողովորդի պատգամական նշանակությունը ունեցող ուրախության օրերին, երբ ամբողջ աշխարհի հայության հայացքը դարձել է բապի Ա. Էջմիածինը».

Ժողովին ողջունում են ՍՍՌՄ Կառավարության ներկայացուցիչ Ի. Վ. Պոլյանսկին և Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Ն. Հովհաննիսյանը. ողջունի ճառով հանդես է զալիս նաև Հ. Ջոնանը. Էկրանից անողերեն լեզվով հնչում է նրա ճառը.

«Ես ուրախ եմ, որ ի վիճակի եմ իմ քրիստոնյա եկեղեցու հնագույն ճյուղը ներկայացնելու քրիստոնեական եկեղեցու է ավելի հնագույն ճյուղին...»:

Էկրանից հնչում է «Հորժամանը. առաջին նիստից հետո պատգամավորները ժողովորդի հոծ բազմության հետ հավաքվում

են Մայր Տաճարի դարավոր կամարների տակ պատարագ մատուցելու և Հոգեհանդիսութիւնը կատարելու ի հիշտակ նախորդ կաթողիկոս Խորեն Ա-ի և Երուսաղեմի ու Կույսի հանգուցյալ պատրիարքների:

Հանդիսաւահաների հետաքրքրությունն առում է, երբ սկսվում է եկեղեցական ժողովի երկրորդ նիստը. այդ նիստին Տ. Տեղակալը զեկուցում է իր գործունեության մասին. ընդհանուր հետաքրքրությունը էլ ավելի է մեծանում, երբ սկսվում է զեկուցման այն մասը, որը վերաբերում է Տ. Տեղակալի այցելությանը Խոսիֆ Վիսարինությանը ԱՍԱԼինի:

«Վաղուց ցանկություն ունեինք գնալ Մոսկվա, ներկայանալ կենտրոնական իշխանության որոշ խնդիրներ լուծելու համար. Տարիվույս ապրիլի 19-ին հաճեց ինձ ընդունել մեր երկրի և աշխարհի Մեծ մարդը՝ Խոսիֆ Վիսարինությանը ԱՍԱԼինը և լսելով մեր զեկուցումը Սուրբ էջմիածնի մի շարք կարիքների մասին, անձնական մակարությամբ դրականական լուծեց, որ երկրի և մեզ համար օրենք դարձավ! Խոսիֆ Վիսարինությանը ԱՍԱԼինը մեզ ընդունել պետք է համարել Մեծ մարդու գործունակության և համարության նշանակ հանդեպ հայ ժողովորդի, իսկ խընդիրների մակարական դրական որոշումը հանդեպ էջմիածնի տածած վատահությանու:

Այս խոսքերի հետ էկրանով մեկ երկում է Տ. Տեղակալի զեկուցագրի բնագիրը և ՍՍԱԼՄ ժողովավետի նախագահ Ի. Վ. ԱՍԱԼինի ձեռքով արկած մակարությունը:

«Ավարտելով մեր խոսքը, շարունակում է Տ. Տեղակալը, — պարտք ենք համարում Ա. էջմիածնի կողմից հրապարակով հայտնել խորին շնորհակալություն աշխարհի Մեծ մարդուն՝ Խոսիֆ Վիսարինությանը Ա-ի, որ հայ ժողովորդի պատմական մեծ հաստատության, Ա. էջմիածնի վերակառւեցման հիմքը դրավ, այլև կենտրոնի և հայ խորհրդագիրն կառավարության, որոնք աշակեցելին Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման, դյուքտագրին՝ արտասահմանի պատգամավորության մուտքը երրորդային Հայաստան։

Տ. Տեղակալի զեկուցման վերջին խոսքերը մեծ փանգավառությամբ են ընդունվում:

պատգամավորների կողմից. նրանք հոգակային իրենց շնորհակալությունն են հղում Խոսիֆ Վիսարիի կողմէ ԱՍԱԼինին։

Բացադրկ հետաքրքրություն է ներկայացնում ֆիլմի այն մասը, որը նվիրված է կաթողիկոսի ընտրությանը և օժմանը, կինո-ժամապահների վրա մեծ հաջողությամբ վերաբարերկել են Հայ եկեղեցու ղարավոր արագիցիաները։

Խորհրդավոր բոռեկ է. պատգամավորները հավաքվել են Մայր Տաճարում. արարողապետ Մամբրի եպիսկոպոսը կարդինալ է երգման տեքստը, որը կրկնում են բոլոր պատգամավորները. նրանք երգվում են անշահանդիր կեպով կատարել իրենց պարագը. Փանքի կամարներից լսվում է նրանց երգման արձանագրը։

Սկսվում է գաղանի քվեարկությունը. մեկ-մեկ քվեատուիին են մոտենում պատգամավորները. Քվեատուիը բացելուց պարզվում է, որ 111 պատգամավորներից 110-ը իրենց քվեն տվել են հօգուտ Տ. Տեղակալ Գեղորգ արքապիսկոպոս Զերոբելյանի։

Ժողովը միաձայն Գեղորգ արքեպիսկոպոս Չեռքեցյանին հորակում է Մայրագույն պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց։

Հնչում են զանգերը, հայ ժողովորդին ավետելով, որ Ա. էջմիածնի կաթողիկոսական աթորիք հանված է 7 տարվա սգո քողը. պատգամավորները մոտենում ու համբուրում են նորդնադիր Կաթողիկոսի աշը, իսկ նա հոգածումներից արտասվում է. Եկեղեցական հայրերը երգում են ռէջմիածնին



ի հօրէս Դիկառը պատմում է նորընտիր Կաթողիկոսի կենսագրությունը։

Նորից Մայր Տաճարի կամարների տակ հնչում է սոուրբ-սոուրբը. սկսվում է նոր ընտիր Կաթողիկոսի օծման արարողությունը Հոծ բազմության ներկայությամբ: Ծուռից հետո Նորընտիր Կաթողիկոսը մհծ շուրբով Մայր Տաճարից ուղեկցվում է Վեհապան, Աջանա և արզմում է Կաթողիկոսական գահին. այլև թափուր չէ կաթողիկոսի գահը:

Ավարտվել է եկեղեցական ժողովը, Արտասահմանից—Ամերիկայից, Բալկանյան երկրներից, Անգլիայից, Ֆրանսիայից, Եղիպատուից, Սիրիայից, Պաղեստինից, Իրանից, Թուրքիայից եկած պատգամավորներ վերադառնում են իրենց տեղերը. Վերադիմին նրանք ցանկանում են մի բոլոր հող տանել Հայրենի երկրից, մի սրբակ շուրբ իրցնել նրա սառնորակ պղբյուրներից: Սրտառուշ է այն տեսարանն, երբ էջմիածնի վանքի մոտ պատգամավորները մնենելուց առաջ քակների մեջ հող են լցնում:

«Հայ եկեղեցական ժողովը էջմիածնում»

կինոֆիլմը Երևանի կինո-ստուդիայի հաջողած գովումենտալ ֆիլմերից մեկն է: Նրա խոշոր արժանիքներից մեկն էլ այն է, որ մեր եկեղեցու կյանքում տեղի ունեցած այս կարևոր իրադարձությունը հարազարդեն և հաջող կերպով վերարտադրվել է կինո-ժապավենի վրա, որը կմնա, որպես պատմական մի կինո-ժամատաթուլի:

Ֆիլմի հաջողությունը պարմանավորված է նաև նրանով, որ լայն կերպով օգտագործված է Խմելլյանի և Չեռքեքչյանի եկեղեցական երաժշտությունը երգեցիկ խմբի չիանալի կատարմամբ:

Այս բոլորից հետո հասկանալի է դառնում այն հաջողությունը, որ ունեցավ կինոֆիլմը Հայաստանում: Նկարը ցուցադրվել է Երևանի, Լենինականի և Հայաստանի շրջանների կինոթատրոններում, որի ընթացքում դիտել են բազմահազար հանդիսատեսներ: Ներկայումս Մոսկվայում ավարտվում է «Հայ եկեղեցական ժողովը էջմիածնում» կինոֆիլմի ոռուսական և անգլիական պատճենների հանումը:

